

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

1) ԳՅՈՂՈՐԾՆՆԵՐ. Մկա վախ չունիմ (պատկեր հայ գաղթականների կեանքից) Թիֆլիս 1905 թ. էջ 48.

Դարձեանք մի «պատկեր հայ գաղթականների կեանքից».
Թշուառ հայ ժողովրդի ճակատագիրը կարծես անխզելի կերպով կապակցուած է «գաղթականութիւն» անողորմ ու տնաւէր գաղափարի հետ: Դարերի ընթացքում գաղթականութեան խնդիրը չի հնանում, ասպարէզից չի իջնում հայ կեանքի դառն իրականութիւնից, այլ միշտ թարմ, օրուայ խնդիր է մնում. անիծեանք ճակատագրու: Այդ հանգամանքի շնորհիւ է անհ, որ մեր առաջնակարգ վիպագիրներից սկսած մինչև վերջին գրական մշակը էջեր ու երկեր է նուիրել այս անթառամ ու յարատեւ գոյութիւն պահանջող խնդրին. Խաչատուր Աբովեան, Պոռշեան, Ռաֆֆի, Նոյնպէս և մեր ժամանակակից հայ վիպագիրները հազար ու մի ելևէջներով նկարագրել ու ողբացել են գաղթականութիւնը, յուզիչ ու սրտամաշ պատկերներ են ստեղծագործել, աղքատութիւն, հիւանդութիւն, թշուառութիւն ու մահ են պատկերացրել՝ իբրև հետևանք անողորմ ու սերունդներ սպանող գաղթականութեան, բայց այնու ամենայնիւ հաւածական հայն միշտ գաղթել ու դարձեալ գաղթում է... Ի՞նչ կօգնի մարդուս սիրտը տակն ու վրայ անող, դառնութեան և անօգնականութեան զգացմունքներ առաջացնող հրաշալի, գեղարուեստական նկարագիրը, երբ մարդիկ թողնում են իրենց սիրելի հայրենիքը, տարիների ընթացքում ճակատի քրտինքով ձեռք բերած գոյքն ու իրենց սիրելիների աճիւնները պարփակող գերեզմանները: Ի՞նչ է բարեկեցութեան տենչով վառուած, այլ իրենց կեանքը, պառիւր, ամբողջ գոյութիւնը փրկելու, մարդկային արժանապատուութիւնը սարսափելի ստորութիւնից ազատելու նպատակով:

Գիւլիստանցու «մկա վախ չունիմ» պատմութեանը՝ չնայելով նիւթի շատ ծանօթ և աւելի հմուտ գրիչներից հազար ու մի ձևով նկարագրուած լինելուն, այնուամենայնիւ կարդացում է առանց ձանձրոյթի և տեղ տեղ նոյն իսկ յուզում է ընթերցողի այս խնդրի նկատմամբ բթացած զգացմունքը և տպաւորութիւն թողնում: Զահել—ջիւան Մարկոսը թողնում է իւր հօր մի անգամ հարուստ, այժմ աւերուած օջաղը, որպէս զի

փրկէ իւր «պատիւը», իւր սիրելի ամուսնուն՝ բարբարոսների ձեռքից. նա գալիս է մեր կողմերը. օրական տաս կողէկով է պահոււմ ընտանիքը, բայց երջանիկ է զգում իրեն, երբ արու գաւազ է ունենում. «Էլ վախնայի որ հոս մեռնեմ անգաւակ, կողակիցս միայ անտէր՝ ուրիշներու դռներուն կտոր մը հաց մուրալիս, իսկ մըր ճրագը հոն—մըր երկրին մէջլաւիտեան մարի... Ասօր կնոջս ըսի, ալ հոգ չընես, Տէր մի արասցէ, եթէ մեռնելու ալ ըլլամ, Մուկուչս քրզի կը տանի մըր երկիր...» (էջ-36)

Զնայելով ուրեմն այն զարհուրելի պայմաններին, որից փախուստ են ապալիս թշուառներն, այնուամենայնիւ դարձեալ իգէալը մնում է «մըր երկիր»։ Կենց այս է հայի կենսունակութեան առաջոյցը։

2) Ռ. ՀԱՌՊԵՏՄԱՆ. Զուհակներ. դրոմ 40-ական թուականից. Թարգ. (ստեղծելից) ա. Ս. Արամեան Ս. Պետ. 1905 թ. էջ 106

Յիւանութեան մեծ յեղափոխութիւնն ազատութեան և հաւասարութեան սկզբունքներն իրականացնելու ձգտելով՝ փշրեց այն շղթաները, որով կապուած էին չքաւոր, ստորին կոշտած դասակարգի մարդ արարածները և իրենց՝ սեպհական ճակատի քրտինքով վաստակող մարդիկն ևս հաւասար ճանաչուեցին արտօնեալ և հարուստ դասակարգի մարդկանց հետ։ Մարդկային հասարակութեան այն խոշոր զանգուածները, որ Ֆրիդիկական ամենամանր և ամենաստոր աշխատանքն էին կըրում և հնադարեան հասարակապետութիւնների մէջ իրաւազուրկ ստրուկներ, իսկ միջին դարերում սեպհականութիւնից զուրկ կամ ճորտ գիւղացիական դասակարգն էին կազմում, այժմ հասարակական կեանքի ասպարէզը մտան իբրեւ հաւասար իրաւունքի տէր քաղաքացիներ և որոշ պահանջներ արին՝ իրենց մարդկային իրաւունքները պահպանելու նպատակով։ Երբ յեղափոխութեան մըրկածուփ փոթորիկն անցաւ և կեանքն իւր բնական ընթացքը պտնելով՝ երկրագործութիւնը, վաճառականութիւնն ու արուեստները նորից ծաղկեցին և կեանքի վաւելքն ու փարթամութիւնը դարձեալ ուժեղ թափով առաջացան, շուտով երևան եկան հասարակական կեանքի նախկին կազմակերպութեան քայքայման հետեանքները։ Փառանջական իրաւունքի բոլոր դաւակնների վրայ հաւասար բաշխուելու հետեանքն եղաւ այն հանգամանքը, որ կալուածները հետզհետէ բազմաթիւ մանր կտորների բաժանուելով՝ առաջացրեց գիւղացիական մի նոր ազատ դասակարգ՝ մանր կալուածատէրներից բաղկացած։ Սկզբում ցանկալի այս երևոյթը հետզհետէ ամե-